

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻԻ ԽԱՄԱՐ	
Վ. առնա	Քր. 1,50
Վ. առնային գուրս	2
Արտատահման	2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չէն զրկուիլը :
Նամակ գրամ և այլն զրկել հե-
տեւեալ հաղէին ,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԱՏԱԿԻ
Վ. առնա (Պաշկարիս) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հաւար 7 1/2 Մանթիմ

Administration du journal
« GADAG »
VARNA, (Bulgarie).

ԼԵՈՒՆ ՄԱՐԴԸ

Կռիւր սկսաւ :

Եթէ երբէք օր մը յարմար դատէի և միջոց ունենայի մասնաւոր թերթ մը հըրատարակելու, անունը **ԿԻՐԱԿԻ** պիտի դնէի : Կռիւր հաշտութեան, համերաշխութեան նախադասն է . ինչպէս մեղուն կիճը՝ մեղր արտադրողին ամենահարկաւոր զէնքը : Ո՛վ կը յանգգնի անոր թեւիկներուն գպիլ, երբ նա կը թռի ու կը թռի իր գործը շարունակելու : Մեղուն առաջին պատահածին աչքը կը կծէ, որ իւր ճամբուն վրայ փուշ մ'է և ինք կերթայ իր պաշարը պատրաստելու վարդէն ու նարդ խէն, շուշանէն ու մեխակէն :

Այսպէս իմ ծագիկս է իմ ժողովուրդս, ինի հարուստ թէ աղքատ . իոկ կռիւս անոնց հետ է, որոնք կուզեն հարստահարել այդ պատուական ժողովուրդը, որուն զաւակն եղած եմ : Եթէ չը կայ ժողովուրդ, չը կամ և ես, ուրեմն իմ ու իմ սիրական ժողովրդի գոյութեան կռիւն է, որը կողմ մը կը իմ և անոր թշնամներուն դէմ : Մարդու ախանջ ունեցողներուն հետ է իմ խօսքս :

Հայ ժողովուրդ, մի՛ սպասեր ինձմէ փափկութիւն, կեղծաւորութիւն, մինչև անգամ չնախն քծնանք, զորս կուտան

ոմանք ձեզ իրրե ծամոն (սագըզ) իրենց էջը ներկելու և ընկուղը դըրելու համար : Ես լեռնցի եմ, փափկութենէ զուրկ, կոպիտ ու կոշտ, ինչ որ ունիմ, այն պիտի տամ, երկաթ, քար, ապուռած, որչափ ժառանգած եմ իմ պապերէս . ա՛խ իցիլ թէ ունեցած ըլլայի անոնց բոլոր կոշտութեան առաւելութիւններն, որոնցմով պահեցին պահպանեցին Հայ յութեան պատիւն Զէյթունի սարերուն ու սորերուն մէջ . Տարրոսի Աստուածապատիւ բազուկներուն մէջ :

Այո՛, առաջին գործս է տապար ու բրիչ ի ձեռին քանդել, կործանել այն շէնքերն, որոնք շուքի տակ կը թողուն ժողովուրդին փառքը ու կ'սպառնան անոր առողջութեանը : Ա՛յ, բաւական է, որ ժողովուրդը խաղալիկ ու գործիք դառնայ կարգ մը անանուն ու անծանօթ ազգասպաններու :

Մի՛ բռնէք, պատուական ժողովուրդ, Զաքըրեան քանդել միայն դիտէ, մի՛ քիչ համբերատար եղէ՛ք և պիտի տեսնէք, որ առանց քանդումի չը կրնար շինուիլ . այո՛, այսօր այս է ամեն ճշմարիտ հայրենասիրի պարտքը :

Չանդաւածներ, որոնք յեղափոխութեան նուիրական պատիւն ազատեցին և ԱՆԻՇԵՍՆՈՒԹԵԱՆ՝ յեղափոխութիւն և ՅՈՅՅԻՆ՝ ապստամբութիւն անունը

տուին, իրենց աւերակներով միայն կըրնան մեզի ցոյց տալ շիտակ ճամբան:

Թողուցէ՛ք, ուրեմն, որ քանդեմք և եթէ հնար է, մէկ ձեռքիս մէջ հազար բրիչ և միւս ձեռքիս մէջ ալ նոյնքան տապար առնելով քանդեմք:

Յ. ՉԱՔԸՐԵԱՆ

ԿԱՏՈՒԿ

Ռուսնուք, 29 Մայիս 1897

Վաղեմի Բարեկամս,

Անշուշտ կը ճանչնաս զիս. կը յիշե՞ս այն օրերը, ուր ձեռք ձեռքի տուած, երկուքնիս ալ դեռ կայտառ երիտասարդներ՝ կը մագըլցէինք Իսկիւտարու բարձունքը, կամ կ'իջնէինք Գում-Գաբուի խորերը, միշտ յուսալից եւ հպարտ մեր ազգին ապագային վրայ: Քու սրտիդ մօտ ապրած, Քու քնարիդ սիրահար, Քու հոգեկան տառապանքներուն գիտակից հէգ ծերուկդ է, որ արթնցողիւ իր մահատիպ քունէն, Քու Յայտարարութեամբը:

Է՛հ, բարեկամս, ինչո՞ւ էր պէտք: Դու լալկան բանաստեղծ, արդեօք Քու անսպառ արցունքներուն հաւասար համեմատութիւն առած չէի՞նչ հայրենի աւերակներն: Պղծուած չէի՞նչ վանքեր ու եկեղեցիներ: Քար ու քանդեղած չէի՞նչ գեղ ու աւաններ, քաղաքներ ու նահանգներ, որոց աւերակներէն դեռ կը փչէ ու կը փչէ մահահոտ փոշին ամենուս երեսին ալ...: Կենաղբաւ եղած չէի՞նչ մեր ամենէն թարմ ուժերն. ճղիկ ճղիկ եղած չէի՞նչ Հայկական դժբաղդ դարաստանին ամենէն յուսատու ծառերն ու ծաղիկներ, որոց երակներէն դեռ կը ցայտէ ու կը ցայտէ անիծուց արիւնը մեր ամենուս ճակատին ալ...:

Լալ, յաւէտ լալ, այս էր քու կոչումը. արցունքներու մէջ խեղդուիլ, այս էր Քու պարտքը, որպէսզի՛ եթէ երբէք ունենայիր, Քու չիբիդ վրայ գրէինք «Ֆէլէկեան բանաստեղծ ապրեցաւ եւ բանաստեղծ մեռաւ»:

Ինչո՞ւ էր պէտք, քնարին տեղ դանակն

ընտրել եւ խաղալ այնպիսի վէրքերու հետ, որոց դարման՝ եթէ ամենէն ճարտարն իսկ լինէիր, վիրաբուժի գործ չէր, այլ միայն Աստուծոյ անհուն ողորմութեանը...: Քու բռնած ճամբադ շատ փշալից է. մարդ կը սարսույց ոտք գնել անոր մէջ. բարեկամս, սխալած էք: Եւ եթէ չէք սխալած, գոնէ շատ յանդուգն եղած էք, ինչպէս կը դատեմք ու ծրագրէք, որ կ'ըսէ,

«Կատակ՝ ժողովրդին ներքին տառապանաց ազդեցութեամբը ծնած, ուզողի այդ մարտիրոս սարբին թերթը պիտի լինի եւ անոր օգտին պիտի ծառայէ, առանց ականջ դնելու սպառնալիքներուն, որոնք կրնան թափիլ իր գլխուն թէ ՈՍԿԵՐԱՐՁՆԵՐԷ եւ թէ բարոյական նկարագրէ գուրկ, անվստահելի եւ դատարկախօս ԳՈՐԾԻՉՆԵՐԷ, ըլլան ատոնք թէ՛ պաշտօնական եւ թէ՛ ինքնակոչ»:

Բայց՝ Աստուծոյ սիրուն — խօսքը մէջերնիս — երբ մեր ընկերվարական գործիչներ 90 ի Գում-Գաբուի ցոյցը՝ դարազուլսը կը համարին մեր ժողովրդին ինքնաճանաչութեան, եւ առաջին քայլը, գէպի «Ընկերվարական ու ազատ Հայաստան», Դու ազատ համարձակ պիտի ըսե՞ս:

Ատիկա հիմն էր այն բաղդաչէն ոսկերուգին, զոր կուզէր բարձրացունել արեան ճահիճներու մէջ, վա՛խ, վա՛խ, մեր ճիւղան կըտրիճներու զիականց վրայ այն ԵՍ ու ԿԻՆՍ, որուն պատկեր՝ իբր գործիք թէ գործակից, շատ լաւ գծած էր երանելին Արփիար:

Երբ ինք՝ պատրաստելով 95 ի Պապը-Ալիի ցոյցը, կուզէր ի կարգ բերել Պոլսոյ ըստահակ ժողովուրդը եւ մասնաւորապէս հարուստ դասակարգին մէկ ապացոյցը տալ իր հսկայ ու ահաւոր գոյութեանը, ի՞նչ, Դու ազատ համարձակ պիտի ըսե՞ս:

Այդ յաւիտենական ԵՍ ու ԿԻՆՍ՝ յաջողութեան ոսկեղինիկ պսակներու վրայ հեշտօրօր քուն մը պատրաստելու եւ կամ անոր ծառայող Սէյտական պալատ մը ներկելու համար էր, որ արիւն ցայտեցուց դէս ու դէն, առանց կարմրցնելու իր եւ իր մեծ մեղսակցին — Արփիարի — սեւուկ երեսները, որոնք

դժբաղդաբար կը կրէին կաշեայ անթափանց
դիմակներ:

Պիտի պոռա՞ս թէ թուրք Ոստանին մէջ
անօրինակ խելացեղութեամբ եղած այդ ամեն
ցոյցեր, այդ ամեն աղմուկներ թշնամիին
առջեւ բաց սեղանի մը պէս պարզեցին մեր
ներքին ձգտումներ եւ հետեւապէս պատճառ
եղան կարգ մը կոտորածներու, որոց տխուր
յիշատակ դեռ անմարս կը մնան մեր ամենու
սրտին վրայ ապառաժներու պէս:

Պիտի ըսե՞ս թէ ատոնք Արգոսի աչիւր
տուին երկչոտ Համիտին աւելի ուշադիր դի-
տելու մեր ամեն քայլերը՝ Ոստանին մէջ ալ,
Ոստանէն դուրս ալ եւ յեղափոխութեան մի-
ակ պահապան հրչտակը, միակ նուիրակա-
նութիւնը — ԳԱՂՏՆԻՔԸ — խլուեցան աղաչ-
ներու ձեռքէն:

Է՛ր բարեկամ, եթէ պիտի ըսես ատոնք,
ուրեմն ուրիշ շատ բաներ ալ պիտի ըսես
մանաւանդ այժմէութիւն ունեցող խնդիրնե-
րու վրայ, որոց ցանկ բնական է որ հետզ-
հետէ պահանջեմ Բենէ իբր հինաւորաց բա-
րեկամ եւ գաղափարակիր:

Հիմայ յողնած եմ, ձեռքս կը դողդղայ եւ
այսօր դժբաղդաբար չեմ կարող այլեւս եր-
կարել հարցումներուս արեւնոտ գիծը:

Ճ' տեսութիւն:

ԾԵՐՈՒԿ

Մեծ հաճոյքով կը հրատարակեմ հե-
տեւալ բանաստեղծութիւնը, եւ կը
խոստանամ յիշ իր ցոյց տուած հաս-
ցէին Կոստակի առաջին թիւէն սկսեալ
յաջորդաբար 20 թիւ:

Վառնա, 30 Մայիս 1897

Ուրուական, հեգ եմ
«Կոսակ» ներս կ'ուզեմ

Գիտեմ որ հոս է

Եւ որ դասէն է.

Չ'է՞սա անթիւն,

Որ ասդին անդին

Բերնին պատան ալ
Յրուէ վեհաբար:

Թող չախէ, չեխէ,
կամ պոռայ, կանչէ,
Թող մերթ փրփրայ,
Եւ յաճուի էռայ,

Թող քայլէ «փայթախ»
այլ անահ, անվախ:

Էս լաւ կը ճանչնամ
Ում՝ Մայր Հայաստան
Կողէն Տաւրոսին
Անկեղծ Հերոսին

Դարձին կարօտով
Կ'սպասէ լալով:

Աղէկ կը ճանչնամ
Վշտերն հոգեկան
Լացն ու հառաչանք
Անվերջ տառապանք

Ձախձախ քնարին
Հայրենեաց Կուսին:

Բուրվառ մ'ունիմ ես
Ուրուականիդ պէս,
Խնկեմ, որ տուին
Իրենց շունչ յետին

Եւ զոհերն եղան
Ազգի փրկութեան:

Ջէյթուն՝ Տաւրոսով
Կամ Պիւռամսով
Ոգին Հայրենեաց՝
Ինչո՞ւ անձկայրեաց

Չը փարին՝ ինչո՞ւ,
Չաքըրբաններու:

ԱՐՄԵՆԱԿ

«ԿՍՏԱԿ», Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա. Պ. Թափառիկ. — Անտորոգիւր գրուածներ չ'ենք
հրատարակեր: Կը շնորհաւորենք ձեր յաջողութիւնը
եւ կը խոստանանք 10 թիւ «Կոսակ» զրկել, եթէ գիտ-
նանք ձեր հասցէն:

Ա. Պ. Գ. — Պէտք է՛ր, որ հարստութիւնը մարդուս
աւելի քաղաքակալարութեան հով մը տար: Յառաջ
չերթաք, վասն զի «Կոսակ» Ի դատարանին մէջ
խաբի դատ չը կոչ:

ՀԱՆԵԼ ՈՒԿ, ԹԻԻ 2

—0—

Քաղաքէ մը բազմաբառեան
Ձորս ընկերներ դուրս նետուեցան,
Քաղաք դարձան, մոմ վառեցին
Իրենց տեղեր պարապ դառն
Կառակ մ'ըրին դարձեալ նստան:

Ձորսն ալ երկու բերան ունին
Երկու բերնով մէկ բան խօսին:

Սոյն հանելուկը առաջին անգամ լուծողը կ'ստանայ 20 թիւ կրտակ:

ՇՈՒՆՏԱՆ ՊՈՒՆՏԱՆ

—0—

— Ուղուրլար օլսուն թիրաթօս աղա,
պէօյլէ աճէլէ, հա՛նկը թարաֆա:

— Միւսիւ Սուի փախի իսթէմիշ, օւրայա կիտէյօրում, հէմտէ պունտան սօնրա պանա թիրաթօս աղա տէմէյուպ Պարոն Շանթ տէյէճէքսին:

— Ս'ճայիպ, շիմաի տէ էօյլէ մօտա՞մը չըգար:

— Մօտաճը սօտաճը պիլմէմ, Դրօշակեան օլտում:

— Է՛յ Միւսիւ Նուշիկ, գահլէճի չըրադըղընը պըրադալըն, օնա պիր շէյ տէնմէզ, լաքին աշըրըղը նէյէ՞ պըրադալըն, պիր թէնճիրէ ֆասուլէա սաթայալըն կինէ կէչինիրաին ա՛:

— Դաշնակցականա եազըլտում, օնուն ի:ին:

— Թօհաֆ շէյ, Դաշնակցական օլմա իլէ, հէրքէս սոնաաթընը պըրադմալըմը:

— Օնլարըն ծակօնու աա էօյլէ իմիշ:

— Պըրալօ պէ՛, էյի տիւտիւկ պու, է-կէր սօնունա գատար էօթէրսէ:

— Նէ՛լէյէ Տէր Պապա, պէօյլէ գօշա-րադ:

— Իրիցկին խասթա օղուլ, տօգթօրա կիտիյօրում պիր շահատէթնամէ ալմա-յա, գա՛շ կիւնտէն էօլէճէք տէյի, ծախ-

լարտա պիր եաղը բարչա վար պարէ գաչըրմայալըմ:

— Գուլաղը չընլասըն Բուսուգլու Տէր Ղեւոնդըն:

ԹԵԼԵԿՐԱՖ

Աժուռն Թօրալ Շէյրաւիկ

—0—

Լօնտրա, 29 Մայիս 1897

Գօնթ աը Նաղարբէկէ հէր քիմ քի ճէ-սարէթ իտուպ գաբ գաչ տէրսէ, թէրօր ահկեամընճա գաթլ ու մահվընա գա-րար վէրտի: Մասամ աը Նաղարբէկ պու կիւն իշտահլը եէմէք եէտի վէ պիր շիշէ շամբանեա տախի սէֆայը հաթըրլա պատէյի նուշ պույուրտու:

Թիֆլիս, 29 Մայիս.

Պու կիւն Տէլի Պօճու պիշահանէսին-տէն օն պին թօնէլաթօ հայդուկլար եօ-լա գօնտուլար Ձինաստանաա պուլունան իրմէնիլէրէ իմաաա իշիւն:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍ

Գօյունտան չօգ չօպան, նէֆէրտէն չօգ զապիթ, հէրսիտէ պէօյիւք, եօգ տըր հիշ պիր քիւշիւք, պու իլլէթ պու միլլէթէ թապիաթ, Ալլահ հէման սէֆիլ ժո-ղովուրդա եարաըմճը օլսուն:

Ա Ձ Դ

Ինչպէս յայտնի է Պատ. Բաթանորդայ մեր թերթը կանխիկ է: Անոնք, որ ընդու-նած են բաթանորդագրութիւնը, կը խնդ-րենք, որ ղրկեն մեզ բաժնեգինը. իսկ ա-նոնք, որ չեն ընդունիր, թերթը եւ դար-ձունեն չուտով:

Կատակ կը ծախուի նաեւ հետեւեալ տե-ղերն:

Սասունի սրճարանին ծխավաճառը Պ. Թէրզիանի մօտ. Մուսալլա, Ապտուրրահման մղկիթին դիմացը Պր. Ա. Ջարպանէլեանի եւ Մուսալլա, Վասպուրական սրճարան Պ. Գեղամ Տ. Յարութիւնեանի մօտ:

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.